

## «Art EXPO» ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԳՅՈՒՄԴՐՈՒՄ

20.09.2013



2013 թվականի սեպտեմբերի 20-ին «Գյումրին՝ 2013թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում Գյումրիում կայացել է ԱՊՀ երկրների «Art EXPO» I միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը:

Ցուցահանդեսի ընթացքում Գյումրու կենտրոնական հրապարակում առանձին տաղավարներով ներկայացվել են «Art EXPO ԱՊՀ» (ԱՊՀ 9 երկիր), «Art EXPO Մարզեր» և «Art EXPO ամենամյա միջոցառումներ» հարթակները: ԱՊՀ երկրների «Art EXPO» I միջազգային ցուցահանդեսին առանձին տաղավարով ներկայացվել է նաև Կոտայքի մարզը: Ի թիվս բոլոր մարզային տաղավարների, Կոտայքի մարզի մշակութային տաղավար է այցելել նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը: Կոտայքի մարզի տաղավարում ներկայացվել են Չարենցավան քաղաքի տիկնիկային և մնջախաղի թատրոնի ու Քանաքեռավանի արվեստի դպրոցի սաների կատարումները և անհատական աշխատանքները, Գառնի համայնքի բնակիչ, գեղանկարիչ Ռ. Բաբայանի գեղանկարները, Արգել համայնքի բնակիչ Պ. Պարույրյանի քանդակներն ու Զովունի համայնքի բնակիչ Ա. Հայրապետյանի դարբնագործական աշխատանքները: Աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ.Սարգսյանը: